Կարգապահական գործ թիվ ԿԳ-24171

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՄԵՆ ՄԱԿԲԵԹԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Կարեն Խալաթյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Վահե Աստվածատրյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի և Արաքս Վարդանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ փաստաբան Արմեն Մելքոնյանի,

քննության առնելով փաստաբան Արմեն Մակբեթի Մելքոնյանին **(այսուհետև նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 1956) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության պետ Արամ Նիկոյանը **(այսուհետև նաև՝ Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետև՝ նաև Պալատ),** հայտնել է, որ փաստաբան Արմեն Մելքոնյանը 22.08.2024թ. «Hraparak.am»-ի հետ զրույցում հայտարարություն է արել Առուշան Առուշանյանի գործով 21.08.2024թ. Պրոբացիայի ծառայության Սյունիքի մարզային պետի կողմից տեղական ինքնակառավարման մարմիններում ղեկավար պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկելու միջնորդության վերաբերյալ:

Ըստ Դիմողի՝ Փաստաբանը հայտարարությամբ Պրոբացիայի ծառայությունը որակել է որպես անգրագետ, իսկ կառույցի գործողությունները՝ ապօրինի:

Դիմողը տեղեկացրել է, որ Առուշ Առուշանյանը «Hraparak.am»-ի հետ զրույցում հանդես է եկել հայտարարությամբ, որ նա հիշյալ գործով փաստաբան չունի՝ հավելելով, որ չի կիսում Փաստաբանի կարծիքը և, որ Պրոբացիայի ծառայությունը կատարել է այն գործողությունները, որոնք գտնվում են իրենց լիազորությունների տիրույթում:

Թիվ ԿԳ-24171-2-Ա
15.01.2025թ.

Վերոգրյալի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով 16.10.2024 թվականին Դիմողին առաջարկվել է «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետև՝ Օրենք)** 39.5 հոդվածի 4-րդ մասի համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 2024 թվականի հոկտեմբերի 21-ին ստացել է Պահանջը, և ի պատասխան Պահանջի 25.10.2024թ. Պալատում մուտքագրվել է Դիմողի բացատրությունը, որով վերջինս հայտնել է, որ 2024 թվականի օգոստոսի 22-ի գրությամբ արդեն իսկ ներկայացվել է, որ «Hraparak.am»–ի հետ զրույցում Փաստաբանը հանդես է եկել հայտարարությամբ, որով անգրագետ և ապօրինի է որակել Պրոբացիայի ծառայության գործողությունները, մինչդեռ Առուշ Առուշանյանը «Hraparak.am»–ի հետ զրույցում հայտնել է, որ նա հիշյալ գործով դեռևս փաստաբան չունի, և Պրոբացիայի ծառայությունը կատարել է իր լիազորության տիրույթում գտնվող գործողությունները:

Դիմողը բացատրությունում դարձյալ ներկայացրել է «Hraparak.am» կայքի էլեկտրոնային հղումները:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը Փաստաբանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության պետ Արամ Նիկոյանի դիմումի վերաբերյալ, սակայն Փաստաբանը որևէ բացատրություն կամ դիրքորոշում չի ներկայացրել:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով 16.10.2024 թվականին Փաստաբանին առաջարկվել է Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 2024 թվականի հոկտեմբերի 16-ին ստացել է Պահանջը, և ի պատասխան Պահանջի ներկայացրել է բացատրություն, որը 21.10.2024թ. մուտքագրվել է Պալատում և որով Փաստաբանը հայտնել է, որ դեռևս 2020 թվականից պաշտպանել է Առուշ Առուշանյանի շահերը, մտերիմ հարաբերությունների մեջ է գտնվում վերջինիս հոր Գագիկ Առուշանյանի հետ, ում հետ հեռախոսազրույցի ընթացքում տեղեկացել է, որ ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունը միջնորդություն է ներկայացրել Առուշ Առուշանյանի նկատմամբ նշանակված պատիժն ազատազրկմանը փոխարինելու վերաբերյալ:

Փաստաբանին զանգահարել են բազմաթիվ լրատվամիջոցներից և ինքը վերը նշված միջնորդության վերաբերյալ հայտնել է իր կարծիքը: Այնուհետև Փաստաբանին է զանգահարել Հայկան, ում հետ Փաստաբանը մտերիմ է շատ վաղուց: Հայկայի հարցին ի պատասխան, Փաստաբանը նույնպես հայտնել է իր մասնավոր կարծիքը: Փաստաբանը հարցազրույց Հայկային չի տվել, այլ նրա հետ որպես մտերիմ զրուցել է, հայտնելով իր մասնավոր կարծիքը: Մասնավորապես պրոբացիայի ծառայության կատարած գործողությունները անգրագիտություն է որակել՝ հիմնվելով բացառապես իր մասնավոր

կարծիքի վրա, որը բխել է իր սուբյեկտիվ ընկալումից և անգրագիտության բառի բացատրությունից:

Արդի հայերենի բացատրական բառարանում «անգրագետ» բառի բացատրությունը նշված է որպես տարրական գիտելիքներից զուրկ, սխալներով լի և անտեղյակ: Փաստաբանի մասնավոր կարծիքի բացատրությունն այն է, որ ծառայությունը չի տիրապետել տարրական գիտելիքների, եղել է անտեղյակ, քանի որ ներպետական օրենսդրությամբ նախատեսված չէ որևէ օրենսդրական նորմ, որ համայնքի ավագանին նշված հիմքով կարողանա ազատել կամ պարտադրի, որ համայնքի ղեկավարը հրաժարական տա, որպեսզի նշանակված պատիժը կատարվի:

Փաստաբանը հայտնել է, որ որևէ դիտավորություն չի ունեցել պրոբացիայի ծառայությանը վիրավորելու, ինքն ընդամենը հայտնել է իր մասնավոր կարծիքը մասնավոր զրույցում, քանզի «անգրագետ» բառը նշանակում է անտեղյակ և մի քանի քրեական գործերով ևս ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունը նմանատիպ այլ դեպքերով կայացրել է այլ որոշումներ:

Փաստաբանը հետագայում տեղեկացել է, որ իր ու Հայկայի զրույցը վերջինս հրապարակել է կայքում:

Հանձնաժողովի նիստի շրջանակներում Փաստաբանն ըստ էության պնդել է նախկինում արտահայտած դիրքորոշումը՝ հավելելով, որ որևէ մեկին վիրավորելու միտում չէր ունեցել:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 27.09.2024թ. թիվ 369-Ա/ԿԳ-24171 որոշմամբ փաստաբան Արմեն Մելքոնյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետև՝ Կանոնագրք)** 2.2.2 ենթակետի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

02.10.2024թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Դավիթ Առաքելյանին (**այսուհետև՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 02.12.2025թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-2-րդ կետերում նշված փաստերը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 02.01.2025թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 15.01.2025թ. ժամը 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Ըստ լրագրող Հայկա Ալոյանի՝ *«Հրապարակի» հետ զրույցում Առուշ Առուշանյանի փաստաբան Արմեն Մելքոնյանն ասաց, որ պրոբացիոն ծառայության այս միջնորդությունն ապօրինություն է (...):*

(...) Եթե ավագանին չի անում, Առուշանյանի խափանման միջոցը փոխելու միջնորդությամբ այդ ***անգրագետ ծառայությունը*** *ո՞նց է դիմել (...):* **Սույն փաստը հաստատվում է** https://hraparak.am/post/d0c0a3a832125879925e2fcb19c0c3f6 հղումով առկա «Ի՞ՆՉ Է ՈՒԶՈՒՄ ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻՑ ԱՅԴ ԱՆԳՐԱԳԵՏ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ. ՓԱՍՏԱԲԱՆ» վերնագրով հրապարակումով:

2. Փաստաբանը Հայկա Ալոյանի հետ հեռախոսազրույցի ընթացքում ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության **գործողություններն անվանել է անգրագետ:** *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի բացատրությամբ:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Օնիկ Եղիազարյանը փաստաբան է հանդիսանում 30.04.2015 թվականից, և 2020-2025թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Արմեն Մակբեթի Մելքոնյանն ենթակա է կարգապահական պատասխանատվության Օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի և Կանոնագրքի 2.2.2-րդ ենթակետի պահանջների խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Ըստ այդմ, անդրադառնալով Փաստաբանի վարքագծում Օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի և Կանոնագրքի 2.2.2-րդ ենթակետի խախտմանը, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.2.2-րդ ենթակետի համաձայն՝ *մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական կամ այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է խուսափի*

այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում, ինչով պայմանավորված նրա պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ:

Ըստ այդմ, Կանոնագրքի 2.2.2 ենթակետի իմաստով փաստաբանի վրա դրվում է նաև համակողմանի պարտականություն իր գործունեության բոլոր բնագավառներում նպաստել փաստաբանության մասնագիտական բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը: Սույն պարտականությունն ունի ինչպես պոզիտիվ, այնպես էլ նեգատիվ դրսևորում: Առաջին դեպքում ենթադրվում է փաստաբանի կողմից որոշակի ակտիվ գործողությունների կատարում սեփական մասնագիտական և անձնական վարկանիշի բարձրացման ուղղությամբ՝ այդպիսով իր նպաստը բերելով փաստաբանի մասնագիտության հանրային վարկանիշի բարձրացմանը: Նեգատիվ պարտականությունը փաստաբանի պատշաճ վարքագծի նվազագույն շեմն է, երբ փաստաբանից պահանջվում է առնվազն չկատարել հակաօրինական և փաստաբանի մասնագիտության հանրային վարկը խաթարող գործողություն կամ անգործություն:

Փաստաբանի վարքի նկատմամբ հարաբերականորեն խիստ սահմանափակումները պայմանավորված են փաստաբանի մասնագիտության առանձնահատուկ բնույթով և հանրային բարձր կարգավիճակով, որը պայմանավորված է փաստաբանության՝ որպես իրավապաշտպան գործունեության մեծ կարևորությամբ: Փաստաբանը հանդիսանում է հասարակության հատուկ սուբյեկտ, ով ստանձնել է իր առանձնահատուկ դերը՝ իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի շնորհիվ և որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող սուբյեկտ կոչված է նպաստելու արդարադատության իրականացմանը: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն վստահորդների հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության ընկալման համար:

Հենց այս համատեքստում փաստաբանի վրա են դրվում բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ, և նրա նկատմամբ գործում են առանձնահատուկ պահանջներ՝ լինի դա մասնագիտական գործունեության, թե այլ ոլորտներում: Ուստի՝ փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ, այլ ընդգրկում են նրա մասնագիտական-իրավական և բարոյական օրինակելիության բարձր չափանիշներ միջանձնային և հասարակական ամենատարբեր շփումների և առնչությունների ժամանակ: Փաստաբանի գործունեությունը հասարակության կողմից ասոցացվում է փաստաբանի ինստիտուտի հետ ընդհանրապես, ուստի և՝ փաստաբանն իր առօրյա գործունեության իրականացման ընթացքում պետք է դրևսորի այնպիսի վարքագիծ, որը կնպաստի փաստաբանի կոչման և առաքելության նկատմամբ հարգանքի և վստահության բարձրացմանը, ինչը փաստաբանի բարոյական պարտավորությունն է և անդրադառնում է նաև իր փաստաբանական գրասենյակի վրա:

Տվյալ դեպքում, Դիմողն, ըստ էության, Փաստաբանին վերագրում է պետական մարմնի

հասցեին այնպիսի արտահայտությունների կատարման վարքագիծ, որի հետևանքով վերջինս կասկածի տակ է դրել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Արմեն Մելքոնյանը հանդիսացել է Առուշ Առուշանյանի նախկին փաստաբանը և 22.08.2024թ. «Hraparak.am»-ի հետ զրույցում կատարել է հայտարարություն Առուշան Առուշանյանի գործով 21.08.2024թ. Պրոբացիայի ծառայության Սյունիքի մարզային պետի կողմից տեղական ինքնակառավարման մարմիններում ղեկավար պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկելու վերաբերյալ ներկայացրած միջնորդության վերաբերյալ:

Մասնավորապես, «Hraparak.am»-ի հետ զրույցում *(«Hraparak» օրաթերթի հոդվածի հղում՝ https://hraparak.am/post/d0c0a3a832125879925e2fcb19c0c3f6)* Փաստաբանն ասել է, որ *պրոբացիոն ծառայության այս միջնորդությունն ապօրինություն է:* Փաստաբանը նշել է. *«Բացարձակ օրինական հիմք չունի՝ ապօրինությունից բացի ուրիշ բան չկա: Պրոբացիոն ծառայությունը դիմել է ավագանուն, որպեսզի Առուշ Առուշանյանին ազատի Գորիսի համայնքապետի պաշտոնից: Ավագանին պատասխանել է, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն նման լիազորություն չունենք և հիմք էլ չկա: Ո՞ր օրենքով առաջնորդվեմ, որ նման որոշում կայացնեմ, այստեղ Առուշ Առուշանյանն էլի կապ չունի: Հիմա Առուշ Առուշանյանից ի՞նչ են ուզում: Ավագանին կարո՞ղ է՝ թող ազատի Առուշ Առուշանյանին և հարցը փակվի: Եթե ավագանին չի անում, Առուշանյանի խափանման միջոցը փոխելու միջնորդությամբ այդ* ***<u>անգրագետ ծառայությունը</u>*** *ո՞նց է դիմել: Ես հույս ունեմ, որ գոնե դատարանը կգտնվի իր բարձրության վրա: Սա ապօրինության հերթական շքերթն է Հայաստանի Հանրապետությունում»:*

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ «Hraparak.am»-ի նշված հոդվածի շրջանակներում Փաստաբանի կողմից կատարված արտահայտությունները Կանոնագրքի 2.2.2 ենթակետի խախտման համատեքստում քննարկելու համար էական նշանակություն ունի փաստ առ այն, թե ինչ ձևաչափով է լրատվամիջոցին Փաստաբանը փոխանցել քննարկման առարկա տեղեկությունները:

Ըստ այդմ, չնայած Փաստաբանի պնդմամբ նա հարցազրույց չի տվել «Hraparak.am»-ի լրագրող Հայկա Ալոյանին և նշված տեղեկատվությունը փոխանցել է հեռախոսազրույցի շրջանակներում, այնուամենայնիվ, «Hraparak.am»-ի պաշտոնական կայքում հոդվածի հրապարակումը կատարվելուց հետո Փաստաբանը որևէ միջոց չի ձեռնարկել լրագրողի հետ կապ հաստատելու կամ դրա հրապարակման մանրամասները պարզելու ուղղությամբ, ինչն առնվազն վկայում է այն մասին, որ Փաստաբանը գիտակցել է և պետք է գիտակցեր «Hraparak.am»-ի լրագրող Հայկա Ալոյանի հետ հեռախոսազրույցի ընթացքում իր հայտնած տեղեկությունները հետագայում կարող են ձեռք բերել հրապարակային բնույթ:

Ընդ որում, Փաստաբանը Հանձնաժողովի նիստի ընթացքում հայտնել է դիրքորոշում առ այն, որ այդ ընթացքում իրեն դիմել են բազմաթիվ լրագրողներ, որոնցից մեկը եղել է նաև «Hraparak.am»-ի լրագրող Հայկա Ալոյանը:

Ավելին, եթե մի պահ ենթադրենք, որ Փաստաբանը ողջամտորեն չգիտեր այն մասին, որ լրատվամիջոցի լրագրողի հետ իր հեռախոսազրույցի շրջանակներում հայտնած տեղեկությունները կամ կատարված արտահայտությունները հրապարակվելու են, ապա

համապատասխան հոդվածի հրապարակումից հետո վերջինս կարող էր ձեռնարկել ողջամիտ ջանքեր առնվազն պարզելու, թե ինչ պայմաններում է իր մասնավոր խոսակցության բովանդակությունը տեղ գտել դրանում:

Տվյալ դեպքում, Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ քննարկման առարկա հանդիսացող «Ի՞ՆՉ Է ՈՒԶՈՒՄ ԱՌՈՒԾ ԱՌՈՒԾԱՆՅԱՆԻՑ ԱՅԴ ԱՆԳՐԱԳԵՏ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ. ՓԱՍՏԱԲԱՆ» վերտառությամբ հոդվածում[1] ներկայացված *«...Եթե ավագանին չի անում, Առուշանյանի խափանման միջոցը փոխելու միջնորդությամբ այդ* ***անգրագետ ծառայությունը*** *ո՞նց է դիմել...»* արտահայտությունը կատարվել է Փաստաբանի կողմից, ով պարտավոր էր կանխատեսեր, որ նման արտահայտություններ կատարելով, առավել ևս հրապարակային եղանակով դրա ներկայացման պարագայում, կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Հաշվի առնելով ողջ վերոգրյալը և գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրությունները և ապացույցները, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի կողմից կարգապահական նիստերի ընթացքում արտահայտած դիրքորոշումներն իրենց ամբողջության մեջ՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի վարքագծում **առկա են Օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.2 ենթակետի պահանջների խախտման հատկանիշները**:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը:

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ Փաստաբանի մոտ առկա տույժերը:

[1] https://hraparak.am/post/d0c0a3a832125879925e2fcb19c0c3f6

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Փաստաբանը 2020-2025թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ, այն հանգամանքը, որ Փաստաբանը «Hraparak.am»-ի լրագրող Հայկա Ալոյանի հետ հեռախոսազրույց-հարցազրույցի շրջանակներում կատարած արտահայտություններով միտում չի ունեցել վիրավորելու որևէ մեկին, սակայն պարտավոր էր կանխատեսել այդ արտահայտությունների կատարման և հրապարակման հետևանքները փաստաբանի, առավելապես փաստաբանական ինստիտուտի հասարակության կողմից ընկալման համար, Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործով Փաստաբանի նկատմամբ պետք է կիրառել ամենամեղմ՝ «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի և 39.10.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արմեն Մակբեթի Մելքոնյանին (արտոնագիր՝ թիվ 1956) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «նկատողություն»՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.2 ենթակետի խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-24171-2-Ա
15 հունվարի 2025թ.
ք.Երևան